ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# Հ Ր Ա Մ Ա Ն

<<15>> հուլիսի 2014թ. N 186-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի N 1237-Ն որոշման 12-րդ կետի «դ» ենթակետը և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության առջև դրված գործառույթներն արդյունավետ իրականացնելու, գիտականորեն հիմնավորված որոշումներ կայացնելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին կից գիտատեխնիկական խորհուրդ:
2. Հաստատել.
   1) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին կից գիտատեխնիկական խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի,
   2) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին կից գիտատեխնիկական խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՆԱԽԱՐԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Երևան
«15» հուլիսի 2014թ.

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
բնապահպանության նախարարի
2014թ. հուլիսի «15» N 86-Ա հրամանի

# ԿԱԶՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

| | |
|---|---|
| 1. Ա. Գրիգորյան | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար (խորհրդի նախագահ), |
| 2.Ա. Ալեքսանդրյան | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի թափոնների և վտանգավոր նյութերի քաղաքականության բաժնի պետ, կենսաբանականական գիտությունների դոկտոր (գիտական քարտուղար), |
| 3. Ա. Ամիրխանյան | Հայաստանի ամերիկյան համալսարանի «Հակոբյան բնապահպանական կենտրոն»-ի տնօրեն, (համաձայնությամբ) |
| 4. Ս. Բալոյան | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի փոխտնօրեն, կենսաբանականական գիտությունների դոկտոր, |
| 5. Կ. Գրիգորյան | Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, (համաձայնությամբ) |
| 6. Ս. Գևորգյան | Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր, (համաձայնությամբ) |
| 7. Կ. Դանիելյան | Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «էկոլոգիայի և կայուն զարգացման» ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, (համաձայնությամբ) |
| 8. Ֆ. Դանիելյան | Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, (համաձայնությամբ) |
| 9. Ա. Ջիրոյան | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության պետ, կենսաբանականական գիտությունների դոկտոր, |

| | |
|---|---|
| 10. Պ. Թոզալաքյան | Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու, (համաձայնությամբ) |
| 11. Մ. Ղազարյան | Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի էներգետիկական ֆակուլտետի «Ջերմաէներգետիկա և շրջակա միջավայրի պաշտպանության» ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, (համաձայնությամբ) |
| 12. Ա. Ղուկիջանյան | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի պետական արգելավայրի պետ, կենսաբանական գիտությունների դոկտոր, |
| 13. Ս. Նանագուլյան | Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, (համաձայնությամբ) |
| 14. Ս. Պապյան | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, |
| 15. Լ. Սահակյան | Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն, աշխարհագրական գիտությունների թեկնածու, (համաձայնությամբ) |
| 16. Գ. Սանթրոսյան | Հայաստանի պետական ագրարային համալսարանի ագրոնոմիական ֆակուլտետի դեկան, գիտությունների թեկնածու, դոցենտ, (համաձայնությամբ) |
| 17 Գ. Փիրումյան | Երևանի պետական համալսարանի դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի էկոլոգիական քիմիայի ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, (համաձայնությամբ) |
| 18. Լ Օսիպյան | Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի պատվավոր վարիչ, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, (համաձայնությամբ): |

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
բնապահպանության նախարարի
2014 թ. հուլիսի «15»-ի
N/86-Ա որոշման

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
# ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են գիտատեխնիկական խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը:

2. Խորհրդի գործունեության նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ոլորտում գիտականորեն հիմնավորված մոտեցումների կիրառմանը, մթնոլորտի, հողերի, ջրերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու վերարտադրության բնագավառներում պետական քաղաքականության ձևավորմանը ու ռազմավարության մշակմանը, ինչպես նաև ոլորտը կարգավորող իրավական ակտերի արդյունավետության բարձրացմանը նպաստելն է:

3. Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն աշխատակարգով:

4. Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով:

## II. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Խորհրդի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարը:

6. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ, ինչպես նաև արտահերթ նիստերի միջոցով՝ սույն աշխատակարգի 10-րդ կետին համապատասխան:

7. Խորհրդի նիստերը հրավիրում և վարում է խորհրդի նախագահը:

8. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում խորհրդի նիստը կարող է վարել անդամներից մեկը՝ խորհրդի նախագահի հանձնարարությամբ:

9. Խորհրդի յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ խորհրդի նախագահի տեղեկատվության ներկայացմամբ:

10. Խորհուրդն իր արտահերթ նիստերը գումարում է խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի առաջարկությամբ:

11. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի կազմի առնվազն երկու երրորդը:

12. Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:

13. Խորհրդի այն անդամը, ով համաձայն չէ խորհրդի ընդունած որոշմանը, ներկայացնում է իր գրավոր հատուկ կարծիքը, ինչը կցվում է որոշմանը:

14. Խորհրդի անդամները խորհրդի նիստի անցկացման վայրի, օրվա, ժամի և նիստի օրակարգի մասին տեղեկացվում են նիստի անցկացման օրվանից առնվազն 5 օր առաջ:

15. Խորհրդի նիստերին կարող են մասնակցել հրավիրված պետական պաշտոնյաներ, փորձագետներ, զանգվածային լրատվության միջոցների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

16. Խորհրդի նախագահի հանձնարարությամբ, խորհրդի նիստի օրակարգի հարցերը նախապատրաստելու նպատակով նախնական քննարկումներ կազմակերպելու համար կարող են հրավիրվել խորհրդակցություններ՝ խորհրդի անդամների առնվազն մեկ երկրորդի մասնակցությամբ:

## III. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

17. Խորհրդի նախագահը՝

1) վարում է խորհրդի նիստերը.

2) ստորագրում է խորհրդի՝ գիտատեխնիկական, խորհրդատվական առաջարկությունները և նիստերի արձանագրությունները, խորհրդի գործունեության հետ կապված մյուս փաստաթղթերն ու գրագրությունները.

3) իր բացակայության դեպքում խորհրդի անդամներից մեկին հանձնարարում է վարել խորհրդի նիստը.

4) խորհրդի հաստատմանն է ներկայացնում խորհրդի նիստի օրակարգը,

5) խորհրդի ընդունած որոշումների կատարման նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.

6) իրականացնում է սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

18. Խորհրդի անդամն իրավունք ունի՝

1) խորհրդի նիստից առնվազն 3 օր առաջ գրավոր հարցեր ներկայացնելու խորհրդի նիստի օրակարգում ընդգրկելու համար.

2) ներկայացնելու առաջարկություններ խորհրդի գործունեության, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

3) ծանոթանալու խորհրդի նիստերի արձանագրություններին:

19. Խորհրդի անդամը պարտավոր է՝

1) մասնակցել խորհրդի աշխատանքներին.

2) իրականացնել սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

## IV. ԽՈՐՀՐԴԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

20. Խորհրդի գիտական քարտուղարը խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն աջակցելու նպատակով՝

1) նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերն ու դրանք տրամադրում խորհրդի անդամներին.

2) կազմում է խորհրդի նիստերի արձանագրությունները.

3) ապահովում է խորհրդի նիստի որոշումների նախագծերի կազմումը.

4) վարում է խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

5) գրանցում է խորհրդի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները.

6) կազմակերպում է խորհրդի որոշումների տրամադրումը խորհրդի անդամներին և համապատասխան կազմակերպություններին: